Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1112[1]-04.04.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության (1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185) օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածում՝

1. ժա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժա) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար».

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժգ» կետով.

«ժգ) համայնքի տարածքում խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասում՝

1) բ) կետում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ»,«դ» և «ե» կետերով.

«գ)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 -60 000 դրամ:»:

«դ)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառլեքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000-100000 դրամ:»:

«ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում խանութներում, կրպակներում

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000-20000 դրամ:»:

Հոդված 3. 21-րդ հոդվածում լրացնել նոր՝ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի «գ» կետը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթեցում անցած «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

NN	Առաջարկության հեղինակը	Առաջարկությունների և դիտողությունների բովանդակությունը	Արդյունքը
1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	1.Դիտողությունները և առաջարկությունները վերաբերում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան մասերի, կետերի համարակալումները համապատասխանեցնելուն և խմբագրելուն: 2. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը միմյանց չեն համապատասխանում, մասնավորապես՝ 1-ին մասի համաձայն համայնքի ղեկավարը տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն: Մինչդեռ նշված թույլտվության մասով հոդվածի 2-րդ մասում բացառություն է սահմանվում: Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը խմբագրել՝ համապատասխանեցնելով 1-ին մասի դրույթներին:	Առաջարկություններն ընդունվել են: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Առաջարկությունն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: